

Թիւ 26781  
Մարտ 27, 1980

Հոգեշնորհ  
Տ. Վազգէն Ծ. Վրդ. Լէշիշեան  
Առաջնորդի Փոխանորդ Գանատայի  
Թորոնթօ.

Սիրելի Հայր Վազգէն,

Ասացած ենք Մարտ 18, 1980 թուակիր ձեր սեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Փետրուար 28ին գումարուած Թորոնթոյի նորահաստա Ս. Խաչ Եկեղեցւոյ առաջին ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդին ինն անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով բուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց անուանները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Խաչ Եկեղեցւոյ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԸԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Տորթ. Վարդան Այնաճեան  
Տորթ. Վահէ Ավաճեան  
Անդրանիկ Զաքարեան  
Արմէն Լիւրքճեան  
Տորթ. Վաչէ Լէրամէթլեան  
Լեւոն Չէօմլէրեան

Ժան ֆէնէրճեան  
Ղեւոնդ Շահմէլիբեան  
Տիկ. Շարէ Շահնազար